ՀՀ ԿԳՄՄՆ

<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

**Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023**

# Հետազոտական աշխատանք

**Թեմա՝** Միջառարկայական կապեր և ընդհանրական հասկացություններ.դրանց կիրառությունը <<Մայրենի>> , <<Հայոց լեզու>>, <<Գրականություն>> և <<Հայ Գրականություն>> առարկաների դասերին, ինտեգրված դասերի կազմակերպումը

**Հետազոտող ուսուցիչ՝** Հարությունյան Միրցա

**Դպրոց՝** Արմաշի Մ. Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3
Գլուխ1.Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր....4
Գլուխ2.Միջառարկայական կապերը որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց....6
Գլուխ3.Միջառարկայական կապերը գրականության դասերին....8
Գլուխ4.Ինտեգրված դասերի կազմակերպում....11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....21
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....22

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջառարկայական կապերի անցկացումը տարրական դասարաններում ամենից շատ ու ամենից արդյունավետ ձևով կարելի է իրականացնել մայրենի լեզվի դասերին, մայրենի լեզվի միջոցով, մայրենի լեզվի միջնորդությամբ։ Ահա թե ինչու մենք ուսումնասիրության նյութ ենք դարձրել հատկապես այս հարցը՝ նկատի ունենալով, որ ոչ վաղ անցյալում մինչև երրորդ դասարանի մայրենի լեզվի ընթերցարաններն ընդգրկում էին ոչ միայն գեղարվեստական, այլև աշխարհագրական, բնագիտական ու պատմական բնույթի գործնական կամ գիտահանրամատչելի նյութեր, և ուսուցիչները հեշտությամբ այդ գիտությունների վերաբերյալ տարրական տեղեկություններ էին հաղորդում մայրենի լեզվի դասերին։ Միջառարկայական կապերի օգտագործումն ամենից առաջ կապվում է արդեն ձեռքբերվածի կրկնության ու օգտագործման, իսկ ապա նոր, անծանոթ նյութի հաղորդման հետ, ուստի և այստեղ շոշափվելու են նաև գիտելիքների ու կարողությունների փոխանցման արդեն յուրացված և նոր հաղորդվող նյութերի միջև անընդհատ անդրադարձ կապ ստեղծելու, ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի տեղի ու դերի, ինչես նաև գործադրման տարբեր օպտիմալ ձևերի հետ կապված հարցերը։ Ընտրել ենք հե՛նց այս թեման, քանի որ միշտ էլ կարևոր նշանակություն է տրվել աշակերտի խոսքի մշակույթին և դրա արտահայտչականությանը։ Դրա համար մեծ նշանակություն ունի աշակերտի բառապաշարի հարստության աստիճանը և այդ բառապաշարի շրջանակները ընդլայնելու ուսուցչի մեթոդներն ու միջոցները։ Միջառարկայական կապերն ազդում են ուսումնական առարկաների բովանդակության և կառուցվածքի վրա։ Յուրաքանչյուր ուսումնական առարկա հարակից առարկաների համար միջառարկայական այս կամ այն տեսակի կապերի

աղբյուր է: «Միջառարկայական կապերը կարելի է դիտարկել որպես առարկայական ուսուցման համակարգի անհրաժեշտ տարր, քանի որ առարկաները և նրանց հարաբերությունները չեն կարող հակադրվել միմյանց:

# Գլուխ 1.Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները հանգեցրել են կրթական համակարգի արմատական նորացման անհրաժեշտության: Աշխարհում տեղի ունեցող արագ փոփոխությունների ֆոնին Հայաստանի Հանրապետության զարգացման ներկա փուլում կրթության արդիականացումը դառնում է հասարակության տնտեսական և սոցիալական առաջընթացի անհրաժեշտ գործոններից մեկը: Կրթական քաղաքականության գլխավոր խնդիրը հասարակության և պետության ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովումն է: Կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները չեն կարող չազդել կրթական գործընթացի վրա, որին ներկայացվող պահանջներից են ստացած գիտելիքի գիտակցվածությունն ու կիրառելիությունը: Ժամանակակից հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրը համընդհանուր գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների ամբողջական համակարգի ձևավորումն է դպրոցականի, շրջանավարտի, ավագ դպրոցականի մոտ, ինչը հնարավոր չէ իրականացնել ուսուցման գործընթացում առանց միջառարկայական կապերի հաստատման: Հասարակությունը մարդու նկատմամբ առաջ է

քաշում և ներկայացնում շատ նոր պահանջներ, առաջին հերթին մշտական ինքնակրթության, մտավոր զարգացման, մտածելու և ստեղծագործելու ունակության պահանջ, համեմատելու, քննադատաբար խնդրին մոտենալու, վերլուծելու, արժևորելու կարողություններ: «Այս հատկանիշներից շատերը կարելի է զարգացնել դպրոցներում ավելացնելով տարբեր հիմնարար առարկաների միջառարկայական, ներառարկայական ու վերառարկայական կապերը, ներդնելով ինտեգրված դասեր, օգտագործելով համակարգչային տեխնոլոգիաներ, առաջնային դարձնելով մանկավարժի ցանկությունը երեխային սովորեցնել աշխարհը տեսնել ամբողջական, այլ ոչ թե առանձին տեղեկությունների և պատկերացումների մասնատված, որոնք միմյանց հետ չմիավորվելով, ժամանակի ընթացքում հեշտությամբ մոռացվում են և չեն նպաստում շրջակա իրականության իրական պատկերը ստեղծելու կարևոր գործին: Անհրաժեշտ է փնտրել նորարարական միջոցներ և ուսուցման մեթոդներ: Ավագ դպրոցականի կրթության որակի, ուսումնառության մակարդակի բարելավման եղանակների որոնումը նպատակահարմար է իրականացնել ինտեգրված միջառարկայական կապերի զարգացման ոլորտում»:[1]

Ուսումնական աշխատանքում ամեն մի միջոցառում իր որոշակի տեղն ու դերը պետք է ունենա և՛ ժամանակի, և՛ գործադրության տեղի և ձևի առումով, այլապես այն կդառնա ինքնանպատակ, օրգանապես չի ձուլվի ընդհանուր պրոցեսի հետ, չի դառնա նրա կայուն բաղադրիչը: Այդ տեսակետից միջառարկայական կապերի անցկացումը ևս բացառություն չի կազմում, այն ևս իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր կոնկրետ նյութի ուսումնասիրության պրոցեսում:

[1] Արմենուհի Արզումանյան, Միջառարկայական կապեր. գրականություն և պատմություն / Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, 2016, 3, 85- 89 էջ:

Դասի պրոցեսում կամ նյութի ուսումնասիրության ընթացքում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել  երեք տարբեր պահերի՝ նայած անհրաժեշտությանը և նյութի բնույթին։ Այսպես՝ ուսումնասիրվող նյութի ընդհանուր թեմայի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների ու այլ գիտությունների տվյալները թեմայի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու, ավելի ընդհանրացված հասկացություն ձևավորելու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծի բուն նյութի յուրացման համար։

# Գլուխ 2.Միջառարկայական կապերը որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց

Գիտության զարգացումը մեզ լայն հնարավորություն է ընձեռում հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը։ Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը։ Դասի ժամանակ մի առարկան կապելով մյուս առարկաների հետ դասը ավելի հետաքրքիր և արդյունավետ է դառնում: Մտածողության զարգացումը զգալիորեն խթանվում է, Երբ ուսուցումը կազմակերպվում է հուզական մթնոլորտում:[2]Դասի ժամանակ աշխույժ, բարձր տրամադրությունը առաջացնում է հոգեկան ուժերի վերելք, ակտիվ ճանաչողական գործունեություն:1 Գեղարվեստական զգացմունքները ձուլվելով բնագիտական երևույթների

[2] https://forum.armedu.am/

հետ աշակերտին մղում են գաղափարի լրիվ ըմբռնման: Զարմանքը, կասկածն ու հիացմունքը, բնության ուժերի ու օրինաչափությունների ընկալումը և դրանց բանաստեղծական, երաժշտական ու նկարչական անդրադարձները մի մեծ շղթա են կազմում: Այդ զգացմունքները պահպանվում են աշակերտների հիշողության մեջ ու հաջորդող դասերին վերապրելով, վերհիշելով ուժեղացնում են գիտական համոզմունքները: Այս ձևով հնարավոր է դառնում միջառարկայական կապերի հաստատում՝ ամենաանսպասելի դրսևորումներով: Միջառարկայական կապերի ստեղծման նպատակներից մեկը դառնում է ձեռք բերած գիտելիքներն ու ընդհանրացումները սեփական գիտելիքների համակարգի մեջ ներառելը, հակադրելը, վերլուծելը և այլ տրամաբանական գործողություններ կատարելը:Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, դրա համար պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև՝ խորությունը: Ուսուցիչը նկատելով աշակերտների դրսևորած ընդունակությունները պետք է ուղղորդի հասնելու լիարժեքության, ինքնադրսևորման և ինքնաբավարարման: Այս ձևով խթանելով մտածողության, երևակայության, հմտությունների ու կարողությունների զարգացմանը, կամքի ձևավորմանը:

# Գլուխ 3. Միջառարկայական կապերը գրականության դասերին

«Գրականություն» առարկան հանրակրթական դպրոցի հումանիտար առարկաներից առաջատարն է, որը կապված է մի շարք այլ կրթական գիտաճյուղերի հետ: Այն օգնում է աշակերտին զգալու աշխարհի և մարդու միասնությունը: Նման առարկայի դասավանդման գործընթացը կապված է մեծաքանակ տեղեկատվական նյութի օգտագործման հետ, ինչը բազմաթիվ դժվարություններ է առաջացնում տարբեր սկզբնաղբյուրների ընտրության և կառուցվածքային բաժանման հարցում: Եվ հետևաբար, բանասերի խնդիրն է ժամանակակից պայմաններում բացահայտել համամարդկային արժեքները, նպաստել ամբողջական աշխարհընկալման ձևավորմանը: Այդ առաջադրանքն անհնար է իրականացնել միայն մեկ առարկայի միջոցներով: Եվ ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ բանասերն իր դասերին աշակերտի հետ խոսում է ոչ միայն գրականության լեզվով: Ավանդաբար գրականությունը սերտ կապի մեջ է պատմության, հասարակագիտության, կերպարվեստի, երաժշտության, թատրոնի հետ, իսկ 20-21-րդ դարերին բնորոշ է կապը առավելապես արվեստի նոր տեսակների՝ կինոյի, ռադիոյի, հեռուստատեսության հետ: Գրականության փոխադարձ կապը այս առարկաների և 9 արվեստի տեսակների հետ ոչ միայն հարստացնում և խորացնում է աշակերտների գրական գիտելիքները, այլև բարերար ազդեցություն է ունենում հարակից գիտաճյուղերի յուրացման վրա: Դեռ Ալեքսանդր Բլոկն է գրել. «Գրողը պետք է հիշի գեղանկարչին, քանդակագործին, երաժշտին, առավել ևս արձակագիրը՝ բանաստեղծի, իսկ բանաստեղծը՝ արձակագրի մասին: Մենք ունենք

շահավետ համագործակցության անհամար օրինակներ (պարտադիր չէ, որ անձնական), որոնցից ամենահայտնիներն են՝ Հովի. Թումանյան և Արմեն Տիգրանյան, Սասունցի Դավիթ և Հակոբ Կոջոյան, Դ. Դեմիրճյան և Գ. Խանջյան, Սասունցի Դավիթ և Երվանդ Քոչար, Հովի. Թումանյան և Ալ. Սպենդիարյան: Ինչպես որ անբաժան են գեղանկարչությունը, երաժշտությունը, արձակը, պոեզիան, այնպես էլ անբաժան են փիլիսոփայությունը, կրոնը, հասարակությունը, նույնիսկ՝ քաղաքականությունը: Նրանք միասին կազմում են հզոր հոսք, որը կրում է ազգային մշակույթի թանկարժեք բեռը: Սա, ըստ էության, հրահանգ է ժամանակակից գրականության ուսուցչին: Ժամանակակից մանկավարժական կրթության արդիականացումը ենթադրում է աշակերտի մոտ բանասիրական մշակույթի և լեզվական կարողունակության ձևավորում, որպեսզի նա ոչ միայն կարողանա ստանալ իր համար կարևոր տեղեկություն, այլև պատրաստ լինի երկխոսության: «Գրականությունը»՝ որպես ուսումնական գիտաճյուղ, կարող է և պետք է նպաստի անհատի բազմակողմանի, բազմամշակութային զարգացման խնդրի լուծմանը: Այստեղից արդիական է դառնում ժամանակակից մեթոդիկայում միջառարկայական կապերի և դրանց ավելի բարձր մակարդակի՝ ինտեգրված փոխազդեցությունների խնդիրը: Գրականության ինտեգրված դասի տեսությունը և պրակտիկան մեթոդիկայում ներկայացված է բավականին ընդարձակ, սակայն ժամանակի պահանջները մշտապես բարձրացնում են այս տեխնոլոգիայի մշակման նշաձողը: Դպրոցում գրականութան ուսումնասիրությունը բարդ և ստեղծագործական գործընթաց է: Գրականությունը գրեթե անհնար է ուսումնասիրել որպես դպրոցական ուսումնական ծրագրի սովորական առարկա, քանի որ գրականությունը արվեստի երևույթ

է:[3] 10 Միջառարկայական կապերը կրթության հատուկ կատեգորիա են, որն ազդում է մի շարք առարկաների ուսումնական նյութի ընտրության և կառուցվածքի վրա, հզորացնելով սովորողների համակարգային գիտելիքները՝ ակտիվացնում է դասավանդման մեթոդները, կենտրոնանում է կրթության կազմակերպման համալիր ձևերի օգտագործման վրա՝ ապահովելով կրթադաստիարարակչական գործընթացի միասնությունը: Գրականության դասերին միջառարկայական կապերի գործածումը նպաստում է գեղագիտական ճաշակի զարգացմանը և գեղանկարչությանը, երաժշտությանը և կինոյին ծանոթանալուն: Առավել բնական կապի մեջ են գրականությունն ու հայոց լեզուն: Այս առարկաները շատ ընդհանրություններ ունեն: Երկու ուսումնական առարկաների ուսումնասիրության օբյեկտն էլ համարվում է խոսքը: Դպրոցականների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը դասավանդման մեթոդիկայի առանցքային ուղղություններից մեկն է ինչպես գրականության, այնպես էլ հայոց լեզվի համար: Գրականության ծրագրում խոսքի զարգացման վրա աշխատանք կատարելիս խորհուրդ է տրվում ապավինել հայոց լեզվի դասընթացի ընթացքում ձևավորված գիտելիքներին և հմտություններին: Գրականության դասերին բանավոր և գրավոր բոլոր աշխատանքներն ուղղակիորեն կապված են կոնկրետ գրական ստեղծագործության կամ ավելի վաղ ուսումնասիրված ստեղծագործությունների ուսուցման հետ: Գրականության միջառարկայական կապը հայոց լեզվի հետ ուղղված է գեղարվեստական ստեղծագործության տեքստի նյութի հիման վրա դպրոցականների ոճաբանական գիտելիքների ու հմտությունների ամրապնդմանը և կատարելագործմանը,

[3] Տեր- Գրիգորյան Ա., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Ե., 1986:

բանավոր և գրավոր խոսքի տարբեր ժանրերի ուսուցմանը, լեզվի գեղարվեստական միջոցների և գրական ստեղծագործություններում դրանց գործառույթների ծանոթացմանը:

# Գլուխ 4. Ինտեգրված դասերի կազմակերպում

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը:

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: 70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նորտիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար, սինթետիկ, համատեղ դասեր:

Դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը (45 րոպե): [4]

Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն : Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.

- միջառարկայական (interdisciplinary),
- բազմառարկայական (multidisciplinary),
- անդրառարկայական (trans disciplinary) :

[4] «Ինտեգրումը կրթական գործընթացում» - Փնջոյան Տ. 2018 թ

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,
2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից, 3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,
4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,

5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ:

Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ: Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր : Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի

ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն:[5] Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ:Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,
3. ինտեգրման ձևը,
4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,
5. նյութի հաջորդականության կառուցվածքը,
6. նյութի ներկայացման միջոցները,

[5] Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Ս. Վարդումյան, Ի. Օհանովա, Ռ.Պետրոսյան, Լ. Երեմյան, «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Երևան, 2003թ:

7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,

8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները: Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը:Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը:

# Օրվա դասի պլան (համակցված)

**Դասարան** - 7

**Առարկա** – Գրականություն

**Թեմա** – Ե. Չարենցի <<Ես իմ անուշ Հայաստանի >> բանաստեղծության ուսուցումը

**Նպատակը** – Տեքստի ըմբռնում:Դաստիարակել սեր հայրենիքի նկատմամբ ,ընկալել հիմնական գաղափարը,իմանալ բանաստեղծության ժանրային առանձնահատկությունները,ամրապնդել պատկերացումը տեքստում պատկերված հայրենիքի, հայրենի բնության,մարդկային ապրումի և հույզի ,գեղեցիկի մասին:

**Վերջնարդյունք** - Աշակերտները կիմանան և կներկայացնեն <<Ես իմ անուշ Հայաստանի >> բանաստեղծության հիմնական գաղափարը:Կկարողանան աշխատել տեքստի շուրջ՝ կատարելով բառային և տեքստային տարաբնույթ աշխատանքներ:Կուսումնասիրեն և կմեկնաբանեն գրողի գործածա բառապաշարը,պատկերավորման միջոցները:

**Ընդհանրական խաչվող հասկացությունները** - ժամանակ և տարածություն ,օրինաչափություն։

**Միջառարկայական կապերը** –Պատմություն,երաժշտություն,աշխարհագրություն։

**Կիրառվող մեթոդները** – Մտքի տարափ,Վենի դիագրամ.հեղինակային աթոռ,մտագրոհ

**Անհրաժեշտ նյութեր,տեխնիկական միջոցներ** – Մ.Սարյանի <<Եղիշե Չարենց>> և <<Հայաստան>> կտավները,համակարգիչ։

**Գնահատում**

**Տնային աշխատանք**

## Դասի ընթացքը

1.Կազմակերպչական մաս (հաշվառում) |1-2 րոպե|

2. Խթանման փուլ

4. Կշռադատման փուլ

5. Անդրադարձ

6. Գնահատում

Դասի սկզբում ուսուցչուհին ցուցադրում է Մ. Սարյանի <<Եղիշե Չարենց>> նկարը՝ առաջարկելով սովորողներին մեկնաբանել այն։Մտքերի տարափով ասված մտքերը լսելուց հետո ուսուցչուհին տալիս է արվեստում ընդունված մեկնաբանությունը։



Նկար1.

Մարտիրոս Սարյանը Եղիշե Չարենցի կենդանության օրոք մտերիմ էր նրա հետ,բանաստեղծի անզուգական տաղանդի  երկրպագուն էր։Իր սերն ու հիացմունքը Չարենցի հանդեպ տաղանդաշատ  նկարիչն արտահայտել է՝ ստեղծելով բանաստեղծի ՝ ասես անհունության մեջ թափանցող,սևեռուն հայացքով գալիքին նայող դիմանկարը։ Դիմանկարի կողքին պատկերված դիմակը, խորհրդանշում է անսահմանությունն ու հավերժությունը՝  եգիպտական սֆինքսի անբարբառ խոսունությամբ՝  միաժամանակ արտահայտելով սուր տագնապ գալիքի արհավիրքների նկատմամբ: Սարյանը Չարենցին պատկերել է ժամանակի  հոլովույթում: Նկարի միջոցով Սարյանը կարծես թե բացահայտում է մեծ պոետի նուրբ ու զգայուն հոգին, ներքին բարդ, հակասական ու հարուստ ներաշխարհը:

**Իմաստի ընկալման փուլ**- բանաստեղծությունը, համակողմանիորեն և պատկերային համակարգի վերլուծություն կատարելու նպատակով անհրաժեշտ է  դասարանը բաժանել խմբերի՝  տալով հետևյալ հանձնարարությունները.

1. խումբ- պատմական  ակնարկ ներկայացնել հայ ժողովրդի անցած ուղու մասին
2. խումբ- պատմական և աշխարհագրական ակնարկ ներկայացնել Արարատ լեռան մասին
3. խումբ- ներկայացնել տեղեկություններ Գր. Նարեկացու, Ն. Քուչակի մասին
4. խումբ- ներկայացնել Աշ. Սաթյանի «Ես իմ անուշ Հայաստանի» երգը, դուրս գրել մակդիրներ և փոխարկություններ

**Կշռադատման փուլ**- ցուցադրելով Մ. Սարյանի «Հայաստան» կտավը, հանձնարարել սովորողներին Վենի դիագրամի միջոցով կտավի և Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության նմանություններն ու տարբերությունները գտնել:

Նկար2.

Այս ամենից հետո հանձնարարել անգիր սովորել բանաստեղծությունը:

Վերջում դասն ամփոփել մի քանի հարցերով

1. Ինչպիսի՞ն է հայրենիքի կերպարը չարենցյան այս տաղում

2. Ո՞ր հատվածն է գեղեցիկ, ինչու՞:

3. Նշե՛ք, թե որ մտքերի հետ եք համամիտ, որոնց հետ՝ ոչ: Կարծիքները հիմնավորե՛ք

Տնային առաջադրանք

1. Պատրաստել փոքրիկ զեկուցում բանաստեղծության մեջ հիշատակված հայոց մեծերի մասին:
2. Ստեղծել ցուցաժապավեն՝ պատկերներն ավելի տեսանելի դարձնելով:

Կապը ՀՊՉ-ի հետ

Հ 10-40, Հ 10-31, Հ 10-369, Հ10-42, Հ 10-43, Հ 10-46

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով մեր հետազոտական աշխատանքի իրականացման արդյունքում եկանք հետևյալ եզրահանգումներին.

- ✓ Տարբեր առարկաներից ստացած գիտելիքների ու տեղեկությունների միջև տրամաբանական կապերի ստեղծումով նպաստում ենք երեխաների դիալեկտիկական մտածողության ձևավորմանը, ինչպես նաև ձևավորվում է մտածող ու խորհող անձնավորություն:
- ✓ Տարրական դասարաններում մայրենիի դասերը լայն հնարավորություններ են ընձեռում միջառարկայական կապերի կիրառման համար:
- ✓ Միջառարկայական կապերի կիրառումը կարող է դառնալ կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման միջոց:
- ✓ Մայրենիի դասերին անցկացվող միջառարկայական կապերը նպաստում են նաև տարրական դպրոցում կրտսեր դպրոցականների կապակցված բանավոր և գրավոր խոսքի ձևավորման արդյունավետությանը:
- ✓ Ուսումնասիրության արդյունքում պարզեցինք նաև, որ մայրեննիի դասագրքերում միջառարկայական կապերով դասեր վարելուն նպաստող առաջադրանքները սակավաթիվ են:

Միջառարկայական կապի օգտագործումը երբեք և ոչ մի դասարանում ինքնանպատակ չպետք է լինի։ Այն պետք է դառնա միջոց հիմնական նպատակին հասնելու համար, այն պետք է զուգակցվի ուսուցման պրոցեսում ընդհանուր և դասական ձևերի հետ։

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Տեր- Գրիգորյան Ա., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Ե., 1986։
2. 4.Ն. Հակոբյան, ս.. Գևորգյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Դավթյան «Մանկավարժական հաղորդակցում», Երևան 2010թ.
3. Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Ս. Վարդումյան, Ի. Օհանովա, Ռ.Պետրոսյան, Լ. Երեմյան, «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Երևան, 2003թ
4. Արմենուհի Արզումանյան, Միջառարկայական կապեր. գրականություն և պատմություն / Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, 2016, 3, 85- 89 էջ:
5. Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան
6. «Ինտեգրումը կրթական գործընթացում» - Փնջոյան Տ. 2018 թ

ՎԵԲ ԿԱՅՔԵՐ

1. https://forum.armedu.am/